ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի հանրային ծառայողների վարքագծի վերահսկողության վարչությունում փորձագետ ներգրավելու մասին

Աշխատանքների համառոտ նկարագրությունը՝

Փորձագետը իրականացնելու է ծրագրով նախատեսված աշխատանքներ, մասնավորապես՝

1. Մասնակցել անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, վարքագծի կանոնների, շահերի բախման և բարեվարքության հարցերով կազմակերպիչների վերաբերյալ կազմակերպման աշխատանքներին՝ տեղեկությունների հավաքման, մշակման և վերլուծության միջոցով.
2. Իրականացնել վարքագծի կանոնների, անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, բարեվարքության հարցերով կազմակերպիչների և շահերի բախման ինստիտուտների շուրջ առկա թե՛ Հայաստանյան, և թե՛ միջազգային լավագույն փորձի ուսումնասիրություն, մշակել Հանձնաժողովի հաստատմանը ներկայացնել այդ իստիտուտների կատարելագործմանն ուղղված միջոցառումների և փոփոխությունների նախագծեր, ինչպես նաև մասնակցել այդ միջոցառումների և փոփոխությունների իրականացմանն ու գործարկմանը.
3. Իրականացնել հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների վարքագծի կանոնների, անհամատեղելիության պահաջների, այլ սահմանափակումների և շահերի բախման պրակտիկայի վերաբերյալ պարբերական ուսումնասիրություններ,
4. Տրամադրել անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների, վարքագծի կանոնների, շահերի բախման վերաբերյալ մեկնաբանություններ և խորհրդատվություններ.
5. Իրականացնել՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների պաշտոնական պարտականությունների հետ կապված նվերներ ընդունելու սահմանափակումների ինստիտուտի կատարելագործմանն ուղղված ենթաօրենսդրական ակտերի նախագծ(եր)ի մշակման աջակցություն.
6. Իրականացնել նվերների ռեեստրի տեխնիկական առաջադրանքի նախագծ(եր)ի մշակման աջակցություն:
7. Հանձնաժողովի կողմից շրջանառվող և այլ գերատեսչություններից ստացված իրավական ակտերի վերաբերյալ առաջարկությունների և դիտողությունների ներկայացում: Վարչության գործառույթներին առնչվող օրենսդրական բացերի վերհանում և փոփոխությունների առաջարկի ներկայացումը:

Փորձագետներ ներգրավելու ժամկետը՝ մինչև մեկ տարի:

1. Փորձագետի աշխատավարձը կազմում է՝ 267072 (երկու հարյուր վաթսունյոթ հազար յոթանասուներկու) ՀՀ դրամ:

Փորձագետների պարտականությունները՝

1. բարեխղճորեն կատարել աշխատանքային պայմանագրով ստանձնած աշխատանքները.

2. սահմանված ժամկետներում կազմել և ներկայացնել փորձագետի աշխատանքների ծրագրով նախատեսված հաշվետվությունները, վերլուծություններն ու տեղեկանքները.
3. պահպանել համապատասխան մարմնում սահմանված ներքին կարգապահական կանոնները, աշխատանքային կարգապահությունը.
4. պահպանել աշխատանքի պաշտպանության և անվտանգության ապահովման միջոցները.
5. իրականացնել ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ, «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով և աշխատանքային պայմանագրով իրեն վերապահված այլ պարտականությունները.

Փորձագետներին ներկայացվող պահանջները՝

1) Բարձրագույն կրթություն՝ իրավագիտություն մասնագիտությամբ.
2) Մասնագիտական կամ իրավաբանության բնագավառի առնվազն երկու տարվա աշխատանքային ստաժ.
3) Անգլերեն լեզվի ազատ տիրապետում.
4) Իր լիազորությունների հետ կապված անհրաժեշտ հմտություններ.
5) Համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

Դիմող ՀՀ քաղաքացիները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

- դիմում Հանձնաժողովի գլխավոր քարտուղարի անունով (**դիմումի ձևը կցվում է**).
- կրթությունը հավաստող պետական նմուշի փաստաթուղթ (փաստաթղթեր).
- աշխատանքային գրքույկ (գրքույկի բացակայության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել տեղեկանք/ներ կամ այլ փաստաթուղթ/եր համապատասխան մարմնից/ներից).
- արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկ կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայական, կամ համապատասխան տեղեկանք.
- մեկ լուսանկար՝ 3 x 4 սմ չափսի.
- անձնագիր կամ նույնականացման քարտ.
- սոցիալական քարտ կամ հանրային ծառայության համարանիշ ունենալու մասին տեղեկանք.
- ինքնակենսագրական.
- հայտարարություն ՀՀ կառավարության 2018 թվականի օգոստոսի 2-ի N 878-Ն որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետով նախատեսված սահմանափակումների բացակայության մասին (**հայտարարության ձևը կցվում է**):

Պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի կողմից ընտրություն կատարելու եղանակներն են՝

- դիմում ներկայացրած քաղաքացիների փաստաթղթերի ուսումնասիրություն.
- ինքնակենսագրականների ուսումնասիրություն:

Քաղաքացիները փաստաթղթերը ներկայացնում են պատճենների հետ միաժամանակ՝ էլեկտրոնային փոստի միջոցով կամ անձամբ առձեռն:

Դիմումների ընդունման վերջնաժամկետն է՝ 09.03.2023թ

Փաստաթղթերն ընդունվում են միայն էլեկտրոնային տարբերակով միայն աշխատանքային օրերին՝ ժամը 10.00-ից մինչև 18.00-ն:

Աշխատանքի վայրը՝ ՀՀ, ք. Երևան, Կորյունի 15
հեռ.՝ 012-77-77-24, էլեկտրոնային փոստի հասցե՝ hr.cpcarmenia@gmail.com